Հավելված N420
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) առևտրի և ինտեգրացիայի վարչության (այսուհետ՝ Վարչություն) սակագնային և ոչ սակագնային կարգավորման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-32.11-Ղ4-3)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է սակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակման և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցման աշխատանքները,
2. ապահովում է ՀՀ տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման արգելման կամ քանակական սահմանափակումների հետ կապված քաղաքականության իրականացման աշխատանքները,
3. ապահովում է ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում մի շարք ապրանքատեսակների մասով արտոնյալ դրույքաչափերի կիրառման ընթացակարգերի մշակման աշխատանքները,
4. ապահովում է սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում «պետություն-մասնավոր հատված» համագործակցության միջոցառումների մշակման և իրականացման աշխատանքները,
5. ապահովում է ՀՀ համար զգայուն, ինչպես նաև արտահանման մեծ ներուժ ունեցող ապրանքների ցանկերի մշակման աշխատանքները՝ ելնելով երրորդ

երկրների շուկաների առանձնահատկություններից,

6. ապահովում է երրորդ երկրներից ՀՀ-ից արտահանման և երրորդ երկրներից ՀՀ ներմուծման քվոտավորման մեխանիզմի ներդրման աշխատանքները,
7. ապահովում է սակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտում առանձին տեսակի ապրանքների ցանկի և վերջինիս ուղղությամբ մաքսատուրքի դրույքաչափերի կամ ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի մշակման և ԵԱՏՄ անդամ պետությունների հետ բանակցությունների վարման աշխատանքները,
8. ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում ներքին շուկայի պաշտպանության և հակագնագոյացման միջոցների կիրառման քաղաքականության իրականացման աշխատանքները,
9. ապահովում է ապրանքների ծագման երկրի որոշման միասնական քաղաքականության իրականացման աշխատանքները:

Իրավունքները՝

- պահանջել Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից և համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր՝ հիմնավորումներ, կարծիքներ, առաջարկություններ,
- ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններից և շահագրգիռ կազմակերպություններից ստանալ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքներ, առաջարկություններ և եզրակացություններ,
- կազմակերպել Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և շահագրգիռ մարմինների հետ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային քննարկումներ:
- մասնակցել մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված՝ որոշ ապրանքատեսակների մասով մաքսատուրքերի բարձրացման, նվազեցման կամ զրոյականացման, ինչպես նաև որոշ ապրանքատեսակների մասով դասակարգման հետ կապված միջոցառումների իրականացման, թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման ընթացակարգերի մշակման և դրանցից բխող միջոցառումների իրականացման հետ կապված շահագրգիռ մարմինների մասնագետների և փորձագետների հետ անցկացվող խորհրդակցություններին և քննարկումներին՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
- կազմակերպել քննարկումներ միասնական շուկայի ձևավորման աշխատանքների իրականացման հետ կապված համապատասխան պետական կառավարման մարմինների հետ՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում:

Պարտականությունները՝

- ներկայացնել առաջարկություններ համապատասխան մարմիններից ներկայացված անհրաժեշտ հիմնավորումների, կարծիքների և տեղեկատվության հիման վրա Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության

շրջանակներում,

- ստուգել և վերլուծել ապրանքների արտադրության, ներմուծման և արտահանման ծավալները, մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված՝ որոշ ապրանքատեսակների մասով մաքսատուրքերի բարձրացման, նվազեցման կամ զրոյականացման, ինչպես նաև որոշ ապրանքատեսակների մասով դասակարգման հետ կապված միջոցառումների իրականացման, թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման ընթացակարգերի մշակման վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
- մշակել Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացման և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցման աշխատանքներ,
- ստուգել և վերլուծել ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում համապատասխան շուկաները՝ հայրենական ապրանքների մրցունակությունը և ներկայացվածությունը ապահովելու ուղղությամբ,
- ստուգել և գնահատել Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակման և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցման աշխատանքների վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ու կազմակերպություններից ստացված տեղեկատվությունը և ներկայացնել առաջարկություններ:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում

2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: